ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 27

«17» ապրիլի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 043-0001-004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,010464 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԿԱՐԵՆ ՎԱՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/0714/02/18 քաղաքացիական գործով 11.10.2018 թվականի դատարանի վճռով Շիրակի մարզի Հովունի համայնքի 2-րդ փողոցի թիվ 26 տանը կից 104,64 քառակուսի մետր մակերեսով քարաշեն անասնաշենքի նկատմամբ ձեռք բերման վաղեմության հիմքով ճանաչվել է Կարեն Վանիկի Վարդանյանի սեփականության իրավունքը և քաղաքացու դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, քաղաքացի՝ Կարեն Վանիկի Վարդանյանի կողմից գնված 104,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 043-0001-004 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,010464 հեկտար հողամասը /հասցե՝ Մարմաշեն համայնք, գյուղ Հովունի 1-ին փողոց, 5-րդ նրբանցք,

թիվ 5/9/ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման /գտնվելու վայրի/, գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված լրացուցիչ նվազեցնող 0,6 գործակցի կիրառմամբ, մեկ քառակուսի մետրը՝ 86,4 ՀՀ դրամ, 0,010464 հեկտար հողամասի համար՝ 9100 /ինը հազար հարյուր/ ՀՀ դրամ արժեքով վաճառել քաղաքացի՝ Կարեն Վանիկի Վարդանյանին /նույնականացման քարտ՝ 3608790187, տրված՝ 15.12.2017 թվական, 030-ի կողմից/:

2. Նշել, որ սույն որոշման առաջին կետում նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին.

ա/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի՝ Կարեն Վանիկի Վարդանյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

բ/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	------ v	--------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----- v	----------	-------

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ ------ v ---------- ---------- ----------

ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ ----- v ---------- ---------- ----------

ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ----- v ---------- ---------- ----------

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ ------- v ---------- ---------- ----------

ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ----- v ---------- ---------- ----------

ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---- v ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«17» ապրիլի 2019 թվական

գյուղ Մայիսյան